

106-18-19



ՏԵՐԵՆ

Հ. ԿԱԿԱԳՆԱՆ



ԻՍԼԱՄԱԳԻՏԱԿ

ԱԼՊՕՄ

1908

ԿԻՆԿԻՈՅ Ս. ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

ԵՐԿԵՍԿ ՊԱՏՐԻԱՐԻՆԵՐ

ԱՐԲԵՊԵՍԿՈՊՈՍՆԵՐ

ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐ

ԲԺԻՇԿՆԵՐ

ԱՐՏՕՆԱՏԻՐՆԵՐ

ԽՄԱԿԳՐԱՊԵՏՆԵՐ

ՏՊԱՐԱՆԱՊԵՏՆԵՐ

ԵՐԱԺԻՇՆԵՐ

ԴԵՐԱՍԱՆՆԵՐ



ՏԵՐԵՆ

ԽՕՍԲԵՐ ԿՅԿՏՈՒՐ ԵՒ ԹԷ ՅԱՆԳԱՒՈՐ ,
ՁԵԶ ՇԱՀԱԳՐԴՈՂ ՄԷՋԸ ԲԱՆ ԿԱՅ ՈՐ . . .

Կուզե՛ք որ ըլլա՛մ տարի մը ամբողջ
Գիտուն ու բարի, զուարթ փառառողջ
Գիտնա՛մ թէ ծնունդ, Ձատիկ, Տաղաւար ,
Տօթ, ցուրտ կամ մրրիկ եւ ձիւն հողմավար
Եւ կամ անուններ Պող, Պետրոս, Թագուոր
Ե՛րբ կուզան, քանզի պէ՛տք է կարգա՛մ որ
Շնորհաւորե՛ք, ու ըլլա՛մ գիտակ .
Ձայս կը թելադրէ ձեզ Հանրագիտակ :
Յօդուածներ պէս պէս շատ նոյն ու ներհուն
Ծանօթ դիմե՛րու գաղափարներուն ,
Հոն պիտի տեսնա՛մ պատկերներ նոր նոր
Գրչի մարդերու, մինչ . . . Պատրիարք Հօր :
Յուշատետր ալ կայ, զուարթ գիտելիք .
Ո՛վ որ չի գնէ՝ է ճեպի տելիք :
Բայց ի՛նչ է այս մանանան ,
Ըսեմ ամբողջ իմանան ,

Օն փութացի՛ք ու գացի՛ք, ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵՆՆԸ խանութը,
Ձեռներնիդ ալ զուտ deux quarts, ոչ թէ հերուան պէս ուրբ
Եւ հարցուցի՛ք հոն ծախու ՏԱՐԵՑՈՅՑԸ ԱՄԷՆՈՒՆ
ԹԷՈՂԻԿԻ, որ անո՛վ անմահացուց իր անուն :

ԽՄԲ.

1908

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԱՌԱՋԻՆ

ՆՈՐՈՒԹԻՒՆԸ

Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

ԳԱՆՁ ԻՐԱԳԻՏԱԿԱՆ

ԱՅՍ ԳՐԻՆ ՀԱՄԱՐ ՅԱՏԿԱՊԷՍ ՓՈՐԱԳՐՈՒԱԾ

300 ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ

Անմրցելիօրէն ընտելագոյն Դասագիրք՝ Տարր.
Դասընթացի երկսեռ աշակերտաց համար: Գին 5 դր:

Կեդրոնատեղին է հեղինակին սեպհական
ԳԱՐՈՒՆ Դրատունը, Կ. Պոլիս, Մեծ Նոր խան,
վերի յարկ, թիւ 55 :

“ՀԱՆՐԱԳԻՏՄԱԿ,, ԱԼՊՕՄ

Թիշ 18-19, Կադանդի կրկնակ թիշ, 1 Յունվար 1908



Շնորհազօրդ Տ. Տ. Սոհակ կարողիկոս-խապատեան, Ս. Հայրապետ Տաճն Կիլիկիոյ :
Ամենապատիւ Տ. Տ. Մարութիա Արեւիկոյ. Օրմանեան, Ս. Պատրիարք Հայր Կ. Պօլսի :
Ամենապատիւ Տ. Տ. Յարութիւն Արեւիկոյ. Վեհապետեան, Ս. Պատրիարք Հայր Ս. Երուսաղէմի :



Գ Ե Ր Ա Պ Ա Տ Ի Ի

1. — Տ. Եղիեկ եպիսկ. Դուրեան, Ս. Առաջնորդ Չմխուճի: 2. — Դեղզ Արք. Երեցեան, Նախորդ Պատր. փոխանորդ Ս. Երուսաղէմի: 3. — Տ. Հմայեակ Արք. Դիմաֆեան, Բարոզիչ Բերայի: 4. — Տ. Գրիգորիս Արք. Յովնանէսեան, ասեմապետ Կրօն. Ժողովի: 5. — Տ. Դաբրիէլ եպիսկ. Նեվանիրեան, Պատր. փոխանորդ Կ. Գոլիսի: 6. — Տ. Մուսեղ եպիսկ. Սերոբեան, Ս. Առաջնորդ Ասանայի, Սրբազան Հայրեր:

Եթէ լաւ մը ֆրսի՜ կարելի է փրկուի՜ կրնան բժիշկները կարգ մը հիւանդներու համար, որոնք գլխեւ պահին եւ ժամկոչին մէջեղ կը ֆաւոստօլին, առաջինը **հեռմակ** ջուրով, իսկ վերջինը հորի ջուրով լուսուլ համար, ֆրսին մը որ մահու կենաց զոյգ ծորածներէն պիտի հոսի զոգցես . . . Ահա նոյն ֆրսինն է որ հակեսէ ի վար կը վազէ այս պահուս, էրբ ստիպուած կզգամ երկու տող բան գրել դէմս խմբուած պահպանելի եկեղեցականաց հանդէպ: Պիտի խոստանայի վեղարէն զուս գրել երեք հատ, քան թէ վեղարներու տուրջ . . . երեք կտոր: Ու կը մտածեմ, եթէ ես ժամանակ՝ եւ դուք ալ՝ Ազնիւ ընթերցողք համբերութիւն ունիք, թէ՛ ի՞նչ կընամ գրել կզերի մասին, ի՞նչ պիտի թռնու մը կրնամ հրամայել իրենց եւ ի՞նչ original համադրամներով կրնամ մեծաբաւ զիրենք, համադրամներ՝ գլխովին անուշ բլլան, ոչ կծու, ոչ քրու եւ ոչ ալ նոյն իսկ **մայիօս** . . . Անգամ մը իրենց պահպանելի դէմքերուն կը նայիմ, եւ յիշելով մանկութիւնս՝ կը տեսկամ, նորէն կը նայիմ, ու այս անգամ մտաբերելով երիտասարդութիւնս՝ կ'աղնածիմ, **եւտոր** անգամ նայելուս՝ կը տարուիմ մտածել ալն օրին երբ նոյն այս դէմքերը **recommandees** մարմինս տակնովինն ու թաքիկովինն պիտի սանին ձգել **համակալատուի**ր ու . . . կը յարգեմ զիրենք՝ Անդ, այս պարագային ինչպէ՛ս կուզէ՞ք որ կարծիք յայտնեմ անոնց վրայ, որոնց Սուրբ աղօթքին եւ բարի յանձնարարականէն կախում ունի յաշիենական երջանկութիւնս, եւ թէ յրենք եւ որ պիտի յանձնեն, կեանքիս **compte-rendus**, ուրկէ կախում ունի տանջանաց հուրի, կամ քոյրի բոյրի մրցօրցնականակն նակասագիրս . . . Ուստի թողէ՛ք որ եպիսկոպոսաց եպիսկոպոսապետիս՝ Քրիստոսի խօսքը կրկնելով ազատեմ օծիս . . . «Տէ՛ր, եթէ հնար է, այս բաժակը (այս յօգուածը) ինձմէ անցուր . . .»:

Օր մը երբ մեռնինք , ո՞վ զնէ պիտի մեծաշուք կերպով մեր մարմինն 'ի փոս . — **Յայիսկոպոս :** * * Դագաղնուս վրայ , մեր ունեցած կամ չունեցած ծիրքերուն համար , զիսէ՞ք մէկը պերճախօս . — **Յայիսկոպոս :** * * Ծանր մեռել , պատարագ կամ հարսնիք , ո՞վ կը վազէ հոն ու հոս . — **Յայիսկոպոս :** * * Վարդապետն սիրոն ի՞նչ բառ կ'երգէ իր իղծերուն հետ բորբոս . — **Յայիսկոպոս :** * * Սեղանին տակ , առաս առաս ո՞վ՝ թող ուէ՛ , կ'ըսենք , սեւ ծնկիկն ու աստակաւ . — **Յայիսկոպոս :** * * Համրի՛կն հետ ո՞վ կը քաղէ Աւետարան , Նարեկ , Գործոց ու Սաղմոս . — **Յայիսկոպոս :** * * Ո՞վ է այն որուն քարոզէ՛ն կա՛մ կը դառնանք , կա՛մ չենք դառնար . հերետիկոս . — **Յայիսկոպոս :** * * Խռնիկը մոմը երբ մոռնանք , ժամո՛ն չբռնէն ո՞վ կը կարդայ մեզ ափսոս . — **Յայիսկոպոս :** * * Մեր ցրտագո՛ծ հաւատքին մշուշին մէջ ո՞վ կանգուն կայ գերդ փարոս . — **Յայիսկոպոս :** * * Ապաշառու՞ք մեր մեղքերուն քաւտեկեանն ո՞վ կը զնէ բարդ տոկոս . — **Յայիսկոպոս :** * * Բաժակաճառիկ տա՛նն ո՞վ մանաւանդ ակամայ կը խնկարկէ գրագոս . — **Յայիսկոպոս :** * * Զակախն վերեւ ո՞վ չունենար մամբռուքի շատ տկօս . — **Յայիսկոպոս :** * * Ո՞վ կը ցանկայ ապրիլ ա՛յն . պէս , ինչպէս Պօղոս , Պետրոս կամ ֆիլիպպոս . — **Յայիսկոպոս :** * * Սակայն ո՞վ երբեմն մնա՛լ կ'ըզնայ Վոսպորի ափանց վրայ . . . 'ի քրօս . — **Յայիսկոպոս :** * * Զո՞վ կը ծաննաք որուն աջն ըլլայ օրհնենքի ապրիլ . մշահոս . — **Յայիսկոպոս :** * * Կեանքը վերէ՛ն դիտող կա՞յ մարդ մը ճշմարտապէս փիլիսոփոս . — **Յայիսկոպոս :** * * Նիստ ու կացով շա՛ս փառաւոր աշակերտ մը զո՞վ ունեցաւ Գրիգոր . — **Յայիսկոպոս . . . :**

Մեկանը գրչիս ծայրը գեւռ չէ ցամաքած՝ կեցեք բանմ՝ ըսելիքս։ — Ինծի կը վեճակի բռն մը գրել կը-
ղերնի վրայ զուռեշտաթերթի մէջ, կղեր ե . . . զաւեշտաթերթ ! գիտէ՞ք ինչ բան է առ : Շարագրել ունակ
նախադասութիւններ՝ որ իրենց բովանդակած իմաստով լրացողին համար՝ ցուակցական, իսկ ժպտողին համար
խնդակցական գիր նկատուին : Աշխարհիս մէջ տնկարելի բռն չիկայ, կ'ըսեն, նոյն իսկ մեռել մը ողջնցնելը —
հակառակ հիմայ հրաշքի դարձ մէջ չապրելու : Իսկ այսօր կրնա՞ք գտնել անունի արարած մը՝ որ կըն-
կան քով գացած աստե՛ն՝ եգ ձեւանայ մեր աչքին, իսկ էրեկմարդուն քով՝ արու : Երկուքն խառնուողը՝ որ-
գտնակով «Շամբանեա» խմբու պիտի նմոնէր : — Գրուելիւն մը կամ լուրջ կ'ըլլայ կամ զաւեշտական : Ի՞նչ
մեղքս պահեմ, ես չեմ կրնար պատրաստիլ տարաշխարհիկ դամբական կամ մը՝ զոր կարենայի արտասանել երե-
կոյթի մը մէջ, ե կամ՝ ծիծաղով խառն լրջունակ մենտիօսութիւն մ'ընել յուշերկաւորութեան մը պահուն,
առանց անպատկառութեան : Անկեղծութեանս՝ սա պատկառելի կղերականները վկայ, կանխեմ մէջ սակաւին
ստանկ անել կոցութեան մը մատուում չէի : Վեր թքնեմ պխերս, վար թքնեմ մօրուքս . . . զոր ոնիծած
— Կ'սկսիմ կորս — Եկեղեցին հաւատքի բառարանն է. իսկ կղերականները՝ հոն անթեղուած թաղըցի-
որոնք տաքուկ ու վառ կը պահեն միշտ հաւատքի հաւը : — Կղերականին՝ կուսակիցութիւն, աշխարհականին՝
ամուսնութիւն վայել է : Մէկուն մէջ կեանք ունեցողը՝ միւրին պէտք է հրաժեշտ առայ. չուրին մէջ ուրիշ
էտիլը՝ ցամաքին վրայ կեանք չի կրնար ունենալ . . . փոխադարձաբար : Տերտերները հապա Անո՛նք երկական-
ցաղ են : — Կղերականներու վրայ բռն մը գրելու նպատակով սա խմբակարին վրայ նայած տոնեն ի՞նչ կ'իյնայ
միտքս, գիտէ՞ք : Տղայութեանս, երբ այցելու մ'չ, մոտուանդ խմբագիր մը՝ մեր դպրոցը աչքէ անցնելու գար,
Տնօրէնը բոլոր կարգերէ մէկմէկ յաջող տանը կանչելով կը հարցափորձէր զանոնք, այնպէս որ մարդը՝ արժա-
նեղով վրար գերազանցող աշակերտներն միայն տեսնելով, յայտնեց որը վերէն վար գովասանական յօդուած մը
կը բերէ, որուն շուրջով կը չգաւորուէին անոյն նոյն գրասեղաններուն վրայ վխտացող խել մը տկարնին ալ :
Արդեօք «Հանրադիտակ» խմբագրութիւնը զիս այդ կարգի միամիտ այցելուներուն տե՞ղը դրած է որ կը հրա-
ւերէ զիս բռն մը գրել լոկ սա խմբակարին վրայ նայելով, զիս՝ որ անցելոյն փորձաւորութիւնն ալ ունիմ :

ՍՍ.ԲԳ.ԻՍ Ա. ՍՍ.ԳՆԱՆՆ



1. — Վահրամ Թորգոմեան: 2. — Յակոբ Սիմոնով: 3. — Վահմ. Սամուէլեան: 4. — Սիմոն Սեդրակեան: 5. — Արշակ Մեղակեան: 6. — Մկրտիչ Բարադումեան՝ բժիշկ էմբրիոններ :

Եթէ Կրօնաւորը հրգիին բուժիչն է, մեր տօքոններն ալ մարմինին բժիշկներն են: Բահանան **ոգոր-մեսցիով** մը հոգիդ կը մաքրէ, մինչ լժիշկը՝ **բիւռկաքիւ**ով մը ստամոքսդ, Երկուքն ալ **քէմիզը** կը հանեն զմարդ, սովայն պարագայ մը որ կրնայ միսիքարական ըլլալ, այն է՝ բժիշկին կը վնարես մինչեւ վերջին տունչդ. իսկ Բահանային եւ իր նմաններուն, մինչեւ մահդ *et encore*, մինչեւ հոգը լսնանոյ իյդ: Բժիշկները դէմ-բերու պէս են, մէկը միւսին չի նմանիր: Հիւանդ մը ունիս՝ անոնցմէ մէկը կը բժշկես, մէկը ֆեմուքեամբ կը վնուէ... **Թիւֆօ** է, ու կ'սկսիս յղիներու պէս *or* համբել: Ուրիշ մը կը բերես, **բնէմօնի** է կ'ըսէ ու լէմօնի պէս քթուեցնելով դէմքդ՝ կը թափես: Երրորդ մը կուգայ, չորրորդ մը, հինգերորդ մը եւ վերջապէս նարահա չորսը հինգը մէկ կը բերես *consultation*ի, անոնք սենեակ մը ֆառուելով կ'սկսին վիճարանիլ՝ Ամերիկայի եւ Ճաբոնի վրայօք, **սեօ քէնով** պլլըմ ֆառելուն եւ Մալակայի զինիին հրաւալի համին ու հոսին վրայօք, մինչ զորսը, ցուրտ խածածի պէս մոտ մօտ կ'սպասեն վերջին վնիւնին, մէկ կողմէն անուուս քուղքերու մէջ ծա-րելով ասոնց **վիզիթներ**: Դեղագիր մը կը գրեն եւ հարս առնելու պէս կ'առնեն իրարու ետեւէ կը մեկնին կրկին այցելելու խոստումով: Ո՛ր... , նոյն օրն իսկ լուացիին տակէն հետ ի հետ հասնող կին մը՝ **սխտորի լափա** կ'առաջարկէ, որուն արդիւնքը կ'ըլլայ... առողջութիւն: Պէտք է զիտնալ որ ֆեմուքիւնը մեծ դեղա-րան մ'է եւ անոր հանգեան ու բոյսէր մէջի փրկարար դեղերը: Ստամոքսիդ քթել միտ պահեցէք, տփերնիդ տաք եւ զրուսնիդ զով, եթէ այս երեք մեծ պատուէրներուն անտաք, շատ չի փեր, եւ անա բոլոր մեր բժիշկ-ները գործ չի գնալով՝ մէկ մէկ **մալիքաբուռայի** վանառականներ պիտի ըլլան:

Լ.Լ.Ա.

Մահուան, այդ ամենի ցուլին դէմ ո՞վ կը մարառի զերդ Թորէասոր. — **Տոքոր:** * * Կեանքի թելը երկարել, աղէկ կամ գէշ, մար մը գտնող կամ տեսնող. — **Տոքոր:** * * Ան այդ, ո՞վ կը թղթատէ Գիտու-թեանց զիրքն հասնոր ան հասնոր. — **Տոքոր:** * * Վազն ի վազը տուն ո՞վ կը կանչենք, երբ առողջութիւնն իս-ընթանայ տանկ խոտոր. — **Տոքոր:** * * Դեղով դարմանով, երբեմն ալ ո՞վ կը հանէ մեր մարմինը ճղակտոր. — **Տոքոր:** * * Առանց սրտանց բաղձալու. անդիի աշխարհը ո՞վ կը խաւէ մեր գաւալն ու թող. — **Տոքոր:** * * Նորէն ո՞վ է ուղղորդ, որ մենք ապրինք հոս՝ որպէս Մաթուսաղայ կամ Նետոր. — **Տոքոր:** * * Մերին խախտել առողջութեան քով՝ զո՞վ ո'նինք իրեն ճշմարիտ Մենոր. — **Տոքոր:** * * Շատ անգամներ իր դեղ՝ ո՞վ կը թխէ մեր քիմիան... տո'նն ու սխտոր. — **Տոքոր:** * * Ո՞վ է այն որ, — ի՞նչ որ ալ ըլլայ, — միշտ կը պահէ խղճմբասնք մը անպտոր. — **Տոքոր:** * * Ի զին առած ստակին, մահամերձին ո՞վ կը կար-դայ շատ ապրելու սին յորդոր. — **Տոքոր:** * * Ո՞վ չուզեր ճանչնալ իր դեղ՝ անանուխն ու ծոռնոր. — **Տոքոր:** * * Հիւանդին բերնէն ո՞վ շատ կը լսէ. « Իս մեռցունն» պրտոր... . — **Տոքոր:** * * Ո՞վ կը յածի կամ չի յածիր շահերու շուրջ տնոր. — **Տոքոր:** * * Պարզ պնդութեան մը համար՝ երկար բարակ զըր-ուածքով ո՞վ կը յանձնարարէ մեզ « պիսմութեան » ու գլխոր. — **Տոքոր:** * * Մերին տկուռ կազմին դէմ ստէպ ո՞վ ցոյց կուտայ դեզ քննացք մը յախնծոր. — **Տոքոր:** * * Ո՞վ է այն որ հիւանդին հետ ի՞նչպէս ալ վարուի, ո՞չ « ինչու » կը լսէ, ո՞չ « ինչոր ». — **Տոքոր:** * * Հիւանդէն « ապրիս », զրպանէս ոսկիս գանձելու համար, ո՞վ կը տասի քրտնածոր. — **Տոքոր:** * * Երբ չաշողի, Դժոխքին մէջ ո՞վ կ'ունենայ նախաձեռն. — **Տոքոր:**...

Թ.Ե.ՈՒՆԻ

Բժիշկը ի՞նչ կ'ընէ, երբ հիւանդի մը կանչուելի նախ անոր բազկերակը կը բռնէ, աչքին մէջը կը նայի, կ'սկսի հարցափորձել զայն: Շատ ատեն մէջէն չի կրնար լսել, այլ, պաշտօնակից մը օգնութեան կանչել կուտայ, երբեմն ալ փոխն ի փոխը ականջնին հիւանդին կուռակին՝ կուրծքին վրայ կը պտտեցնեն: Բազմիցս կը կրկնեն նոյն բանը, ո՞վ գիտէ թերեւս կ'սպասեն որ տխար ներսէն ձայնէ: Հոս եմ հո'ս: Եւ այս ամէնէն ետքը, ենթացքէն որ հիւանդը բազկերակին վրայ *intermittence* մը ունի, մէկը ստամոքսին կը վերագրէ զայն, միւսը ջիզմուռ խանգարման, ուրիշ մը անարիւնութեան, վերջապէս իւրաքանչիւրը իր ենթադրութեանը համեմատ հիւանդին ամէն կողմէն ներս կը լեցնէ դեղերը՝ զոր օրինակ *Sulfate de strychnine*, *germandrée*, *Iodure de sodium*, *quassia amara*, *sel de Carlsbad* եւ դեռ խել մը ուրիշ անճանաչ դեղեր՝ որոնք բազմին բերումով կամ կը բուժեն հիւանդը եւ կամ... անոր կեանքը կը տուժեն: Տունի մը առջեւէն անցած ատենդ խոտի հոտ մը կ'զգան ռուսներդ, կը հետեւցնեն թէ տունը միկի միկի բռնկած է ներսէն: Խոտնին հոտը՝ հրդեհին տխու-նիւն է, եւ տխուռնիւնը չէն որ մարդուս վրայ ներքին հիւանդութիւն մը կը մատնեն: Ալ դո'ւն դուրսի դիւն նիւն է, եւ տխուռնիւնը չէն որ մարդուս վրայ պտտացուր իմանալու համար թէ « չըթ-բըթ » ր տունին ո'ր կողմէն կուգայ, ուզածիդ պահիդ ձեռքդ տունին վրայ դիր գիտնալու համար թէ տաքութիւնը աւելի ո'ր կողմէն է, նոյն մէջէն կրնաս ելլալ, Միտիկ՝ « կրտսը » ջուրով կը մարին գիտնալը օգուտ չունի: Ամէնէն էականը՝ կրտսը տունին որ կողմն ըլլալը հաստատեն է, ու անկէ ետքը ջուրը ա'ն կողմը հասցնելուն միջոցը գտնալու է, եւ հասնալու է մի-անգամայն թէ կրտսը ջուրով մարեիդ բան մըն է թէ ոչ: Բայց քանի որ առանց տունին մէջ մանելու կրտսը մարեիդ պաշտօնն ունիս, ուզես չուզես պիտի ստիպուիս տունին դուրսիդին, ուր որ ծակ ու ծուկ գտնես՝ հոնէն ջուր թափես որ կրտսը մարես բախին բերումով: Տարբեր խոտեր է թէ կրտսը թափած բէթրոյէ յա-ռաջ եկած ըլլալով, ջուրը փոխանալ մարեիդ՝ աւելի կը ստատկացնէ զայն: Բժիշկներուն բրածը տակէ մալի չափ տաքութիւնն չունի: Տունը միտքին տակ թաղուելէն, մարդը հոգին տակ մանելէն ետքը խոտն եմ անի-ծեր ջրհանկերին ալ, բժիշկին ալ: Բայց ի՞նչ ընել յաճախ ա'յս է Բժշկութիւնը: ՍԱՐԳԻՍ Ս. ՍԱՐԳՍԵԱՆ



1. — Գարեգին Պոյանեան՝ «Արեւելք»ի: 2. — Բիւզանդ Բէշեան՝ «Բիւզանդիոն»ի: 3. — Յովհաննէս Յ. Դալսերեան՝ «Մանգուսէի Էմբար»ի: 4. — Հանգ. Կ. Ս. Իսքիւնեան՝ «Մասիս»ի: 5. — Տէր. Ճ. Բ. Կրին՝ «Աւեսաբեր»ի: 6. — Յովհաննէս Թօլայեան՝ «Մէնմուսի Ախպար»ի: 7. — Արմէն Լուսինեան՝ «Հան-րազիսակ»ի: 8. — Անտոն Սագանեան՝ «Մաղիկ»ի արձանաւոր էմբէսիները:



1. Տֆր. Յակոբ Թօփեան՝ «Արեւելի»։ 2. — Միսաք Գոչունեան (Բասիմ)՝ «Մանգուլէի Էֆէնդի»։
 3. — Հարսրն Մ. Ալէն՝ «Աւեսաբեր»։ 4. — Յակոբ Տէր-Յակոբեան՝ մանկանց «Նապիկ»։ 5. — Ենովք
 Արմէն՝ «Մասիս»ի խմբագրապետ Էժէնցիները։

Եւ ինչ որ է ճշգրտեմք մեծ դրամասան մը մէջ՝ նոյնն է խմբագրապետը իր խմբագրասունը : Զեք մը կը ներկայացուի ճշգրտեմք, վրան աչք մը պարզեցնելէ վերջ՝ կընդունի կամ չընդունի, յոյժած մը կը մասնուցուի խմբագրապետին, գլխէն, մէջտեղէն եւ վերջաւորութեան երկերկու տող կարդալէ վերջ՝ կընդունի կամ չընդունի : Ուրիշ նմանութեամբ, խմբագրապետը տոյժ վարպէտ շուրջն է, որ մասնաբաժնի պատրաստած ո՛ր եւ է համադրման վրայ պարզ տպուած մը տեղեկութիւն վերջ միայն կը հրամայէ. միթէ նոյնը չէ՞ խմբագրապետին քաղաք, երբ սա գրչի մէկ քանի **ոգրագրութիւն** հրատարակութեան կոտայ գրուածքը : Եթէ քերթը նաւու մը նմանցնենք՝ նաւապետը ճշգրտեմք է, իսկ լեկաւարը՝ խմբագրապետը, սակայն այս նմանութիւնը մեծ ծովերու մէջ բաճող նաւերուն կրնայ հաւմարիլ, քանի որ նաւապետը երբ իր խմբագր **ճամբանա** կը ճնկէ, վերջ ղեկավարն է որ նաւուն ուղղութիւն կոտայ : Երանի այն խմբագրապետներուն՝ որոնք **Շիրիքի** սփռու շոգեմաններուն պէս երկու պատշաճն ալ իրենց վրայ է, քէ՛ նաւապետ քէ՛ ղեկավար, ինչպէս ունինք մէկ քանիներ : խմբագրապետը տեսնել մը վարժապետ ալ կրնայ հաւմարտիլ, որուն դպրոցը աշխարհն է, իսկ աշակերտները՝ մարդկութիւնը : խմբագրապետի մը կարծիքները կը նմանին մեղուներու բզրակին, բզրակով զգալով կը պատրաստեն այն աճուած մեղրը, որ այնքան կը բնական իրեն սնունդ, բայց . . . ուտողներին . . . մաս մը մեղր ձեռք ձգելու համար կրնայ ըլլալ որ խայթուի . . . :

ԼԻԼԱ

Ո՞վ է ան՝ որմէ կ'ուզէ գրաշարը ամէն իժմի ձեռագիր. — **Խմբագիր** : * * Գիտէ՞ք մէկը որ միշտ շուն շուն գրելէն՝ դարձած է շուն անձնաւոր գիտագիր. — **Խմբագիր** : * * Ի՞նչպէս կոչել այն անձը որ նիւթ չի ճարած՝ կը փնտէ . . . խորագիր. — **Խմբագիր** : * * Ո՞րն է այն բանտը ժրագին՝ որուն կարկաճն է Լրագիր. — **Խմբագիր** : * * Ո՞վ է ան որուն համար՝ Կեանքը «գիր» էն ի զան չունի ո՛չ մէկ ծրագիր. — **Խմբագիր** : * * Գիտէ՞ք մէկը «Օրուան ղեպ»-ը ու, Թարմ լուրերու քիչ մը էլե՛կ հետքերի. — **Խմբագիր** : * * Ո՞վ է ան որ — իւր մեծկալ դրամադուլս — ունի թուղթեր, թերթեր, մելամ ու գիր. — **Խմբագիր** : * * Ո՞վ է ան՝ որուն ճիշդն ամենաուր պատշաճն է քաղի «Ներքին» ու «Հեռագիր» . — **Խմբագիր** : * * Ո՞վ է ան՝ որ գործիները բազմազան պահի հացին չի . . . ղեկամակիր. — **Խմբագիր** : * * Ունի՞ք մէկը՝ Զրօսանքէ, Հաճոյքներէ միշտ սկսած՝ ճարագիր. — **Խմբագիր** : * * Ճառի քարոզի՞ ո՞վ կայ իւր համարեալ ու վկայեալ (?) տղագիր. — **Խմբագիր** : * * Ո՞վ է ան՝ որ աշխատակցը չեղողին անուշ խօսքի չի փախարի. — **Խմբագիր** : * * Ո՞ր մարդն էր որ երբ կեանքին մէջը իրաւունքով բան գրեց՝ աւտոր բերանը պարգիր. — **Խմբագիր** : * * Ո՞վ է ան՝ որուն չ'աւտարձակ կ'ունենորենք. «ինէ՛ գրչի պայքար չը ծագիր» . — **Խմբագիր** : * * Կա՞յ մէկը որ քննադատներէ կը կրի, բայց . . . քննադատներէ չի կրի. — **Խմբագիր** : * * Զամբիւղող յոյժածներու համար ո՞վ կը մնայ ծայր աստիճան անկարելի. — **Խմբագիր** : * * Հարսնիք, «քոսնէլ», Թատրոն կայ. ո՞վ կ'ընդունի ծիծիծի հրաւիրագիր. — **Խմբագիր** : * * Մտանց ո՞վ չըլլար՝ լաւ գործիներուն շուն համակիր. — **Խմբագիր** : * * Մեր մէջ կա՞յ անձ մը բայց, որ ծերոյթին՝ մնայ յաճախ անանկողին ու «ֆագիր» . — **Խմբագիր** : . . .

ԹԷՈԴՈՍԻ

Խմբագիրին հետ վարուելի գիտցիր, հոգի՛ն առ : «Աբանջելի՛ էր վերջին գրուածքնիդ» երբ բոս Դամբան իրեն հանդիպելով, Ներսիսիէն անուշ խայտաւոր մը կ'զգայ, հաւատար այն ուրախութեան՝ զոր կ'ունենայ կողմով ու գեմով չափաւոր գեղեցիկ կին մը երբ չափազանց խնկարկեալ «Ան ի՛նչ Զախարիէ գրութիւն էր տուած պատասխաննիդ» երբ բոս իրեն, պատճառ մը չունի հակառակ կողմէն մեկնելու քու Ներսիսի : «Անցեալ օրուան խմբագրականնիդ տկար էր բիշ մը» երբ առաւելս, կ'առնէ յաճախ այն գեմը, զոր կ'ունենայ մարդ . . . չերտ մը լեմն առանց շաքարի բերանը դրած առնէ : Այսպէս, շրջապատեց մարդոց կողմէ իրեն տրուած յարգանքն ու պատիւը ուրիշ բան չէ Լիլան ոչ պատուար մը իրմէ բղիթիք հաւանական յարձակում : Ներսիս գեմ, վասն զի խմբագիրները եթէ նեղը մնան՝ կ'ընկերուեն պէս կուտան կամիթ և դնդասեղի հարուած : Ներսիս Դատ անգամ մեղրագրութեան ծիրանի բանդակներու պէս կը գովուին, և Ժեռօտելի բաթիլներու հասարակ համբաւն ունեցող գրիչներ պարագային համեմատ . . . Պատու-Սէքուի հեղուկին պէս գիւթական կը ներկայացուին, պայմանաւ որ մարդ իրենց թերթին . . . անկուտարտար աշխատակցելու կամ ապօնէներ գտնելու գիւցալնութիւնը գործէ : Հապա ժողովուրդը . . . Խմբագիրները այդ մասին բարեբախտ են : Ան որ ժողովուրդին հետ գործ ունենայ, չե՞ս զիտեր թէ ինքզինքը արժեքներու համար պէտք չէ որ անպատճառ արժանիքի տէր մէկը եղած ըլլայ : Մի՛ կարծեր որ միշտ արժանիքներն են ծափահարուողները : Տղայութեան դպրոցին մէջ շատ անառակ էի : Տարեկան հանգիստն օրը, վիճակացոյց կարգացում առնէ՝ ժողովուրդին առջեւ երբ դաստիարակի իր ծաթած ձայնով «ի վարս անառակ» կոչեց, կատողցայ, ծուռ ծուռ երեսը նայեցայ, ու առանց կարեւորութիւն տալու հանգիստն անկերուն, սպառնական շարժումով մը զլուխ երեքուցի : Ասոր վրայ որոտնդոտ ծափահարութիւն մըն էր լրդու ժողովուրդին մէջ, ու ե՛ս, անառակ, այո՛, ծափահարութեցայ խել մը «զոններու և թարիներու մէջ», անո՛ր համար որ այդ պահուն՝ խմբագիրներու և յոյժածագիրներու պէս, գործս ժողովուրդին հետ էր :

ՍԱՐԳԻՍ Ս. ՍԱՐԳՍԵԱՆ



1. — Վսեմ. Յակոբ Պոյանեան: 2. — Հանգ. Յակոբ Մասքեռեան: 3. — Վսեմ. Սերգիէն: 4. — Վահրամ Տէր-Ներսէսեան: 5. — Յարութիւն Ասատուրեան: 6. — Ռոզոյ Սարգսեան: 7. — Միսիւր Մարտիրոսեան (ձիւան) սպարանապետ էմենիներ:

Խանութքս մը որ փոխանակ պարունակողին, պարունակին կը ծախէ: Atelier մըն է սպարանը, որուն գործաւորներն են գրաւորները, եւ պէտքը՝ Տպարանապետը: Շրիկէր, Սոփրաք, Միւռ եւ Բաշմա որոնք զա՛ս զա՛ս Atelier ներունին, մարդը կը հաշուեցնեն, իսկ Տպարանապետները... միտքը: Ամբողջ որահը բաժնուած է մանցահիկ բիշներու որոնց մէջի գիրերը բովէ բով դպրոց սկսան սլաֆներու պէս շարունակով կը կազմեն այն գեղեցիկ հասոյները զորս գնելով կը ստանան: Օրինակ կ'ա գէթ... Ամենուն Տարեցոյցը: Տպարանապետը իր գործին զուխը այն է, ինչ որ է *surveillant général* մը դպրոց մէջ: Այն մտոս փոխակներ որոնք գրաւոր անուանակալ հոգեւորականի մը պէս անհալով կ'աշխատին բիշներուն տալէ, տպարանապետին պզտիկ մէկ հազը իրենց *հաշի* մէկդի դնելով՝ ա՛լ աւելի արագ կ'սկսին բանիլ, եւ ա՛յո ինչո՛ւ գործունեայ տպարանապետ մը ի բաժնուի atelier էն: Տպարանապետները թէն ոչ հետախօսի, սակայն կամայ ակամայ գիտեն թէ այնինչը ե՛րբ նշանակուեցաւ, ե՛րբ ամուսնացաւ եւ ե՛րբ... հողեց: Առանց մասնաւոր հրաւերի է՛ն առաջ իրենք կ'ամ հարսնետու կ'ըլլան եւ կամ յուղարկուոր, քանի որ իրենք կը տպագրեն հրաւիրագիրները: Ինչպէս գլխաւորականաւոր մը նաեւ կ'սպասուի, նոյն բանը պէտք է ունենայ նաեւ Տպարանապետը, զիւրի մը կ'ամ *պոշխու* մը գիրերուն, զարդերուն, եւ անոնց տպագրելու ձեւին պէտք է գիտակցուի: Ահա ինչո՛ւ խելացի յանախորդներ իրեն կը ձգեն գիրերու եւ զարդարումի նաեւ կը եւ անհալ իրաւաբէ: Տպարանի մը յանախորդները ամէն փոփոխեալ խուռներում, *պոստալի* պէս մէկ դուռէն չեն մտնար միւսէն դուռ ելլալու համար եւ առուստուն ալ բացբռնիկ չըլլաւ, հոն մեծողը լուրջ կ'ըլլայ ոտէն մինչեւ կզակը, եւ ոսկիով լեւի լեցում գրաւորները... Բաւար: Է՛ն լուրջ բանասէրն ուրիշ չի կրնար մտնիլ Տպարանապետին հետ, անոր կարողացած ու աչքէ անցուցած տպագրութիւններն թիւ ու սահման չունին: Ամէն մեկեւայ որ տարածման մէջ տուի՝ ամուսնի կ'սպասուէ, մինչ *Կիւրեակապետ*ի գիտը մարդկութեան մէջին համար կը գործէ ու անոր տաք ի սպառն է:

ԼԻԼԱ.

Կայ արդեօք վայր մը յոյնական՝ զոր արժան է կոչել... «Իրաշարի Քաւարան».— Տպարան. ** Գիտէ՞ք սեղ մը՝ ուր բանւորներ աւուրչէ՞ք աւելի՝ աղտոս գիրի առջեւ կը տեսնան.— Տպարան. ** Հացին համար հըր կ'արտաբերուի գրաւորը, Մամուլի այդ անխնայ ծառան.— Տպարան. ** Ո՛րն է այն սեղ՝ որուն պապուկ բանւորներ միշտ ձեռագիր... կը մուրան.— Տպարան. ** Ի՞նչ կանգնեց Կիւրեակապետը՝ իր զարգացման ու... իր շահու խորան.— Տպարան. ** Ո՛ր կը փակցուի թուղթերու այսին՝ գիրի ու տղի հանրագոս իւրան.— Տպարան. ** Ո՛րն է այն շահաստանն որուն հատոյթը ծմբուն՝ կ'ըսեն թէ կը բաւէ ամբան.— Տպարան. ** Ձեռագիր մը հըր հանդերձատունն ունի, հագուած ու շրուած մտնելու համար մասնաւորաւ.— Տպարան. ** Գիտէ՞ք իսպաիլ մը որ գինիի սեղ ըլլայ իր զոս մեղանի ու տառի մառան.— Տպարան. ** Ո՛րն է այն սեղ՝ ուրկէ շուտով գործ առնելու համար, կանխիկ ցնծալու չէ բարան.— Տպարան. ** Մամուլն հըր կը բանի արագ Կիւրեակապետը-Անգղիոյ այդ հսկայ ճիւղան.— Տպարան. ** Գրաշարին ոտին հըր՝ ջուր իջնայով է որ ձեռագիր մը կ'առնէ գիրքի կերպարան.— Տպարան. ** Հեղինակներ — «Փոստալի» սիրուն — հըր սիրտ փոր հասցուցին, ... բարանին կերան.— Տպարան. ** Ո՛ր քով քովի կը քայլեն ժամանցի գիրքեր եւ... Աւետարան.— Տպարան. ** Ո՛րն է այն սեղ՝ որուն անբախտ բանւորներ չունին երբեք նստարան.— Տպարան. ** Ո՛ր հաւնոյն է որ կը թխէ հեղարան, բաւարան ու... Սիպիլի «Թանգարան».— Տպարան. ** Գիտէ՞ք վայր մ'անշուր որ տառի պզտիկ իտղով մը՝ դառնայ իսկոյն ապարան.— տպարան... :

ԹԵՂԵՆԻ

Գիրքերը թուաշապատ գործներ են՝ ուր կը գետեղուին գրական գոհորեղէններ, անոնց վերջնական յղումէն յետոյ: Ուստի տպարանապետները՝ խաղաղութեան են գրական աշխատանքներու: Ի՞նչ փոքր թէ երբեմն այս վերջինները եղած ըլլան... stras: — Գրչի մարդիկ պարտաւորութեան են իրենց միտքի պարտեղին՝ զոր անձամբ կը մշակեն: Տպարանը՝ շտեմարանն է, ուր տպարանապետ պէտք է հաւաքուի պարտեղին արտաբերած բերքը՝ ծախուելու համար: Իսկ տպարանապետները՝ գաղղիւմներ՝ որոնք թուղթերու մէջ պլած եւ ցրուիչ կամ գրաւորաւ կարստներու միջոցաւ կը հրամայեն մեզ այդ արտաբերութիւնները՝ ուր գեղձին քով կը գտնուի ոսկեւիննորը (տամաթէս), տանձին քով ալ ստեպլինը կամ վարդուզն անխտիր, իրենց թուղթերու ծաղիկը քիթերուն, ու երբեմն ալ հատորի մէջ մեզ ամփոփելով զանոնք՝ իրը պահածդ «conserve» գրաւորաւ գտնուելու ցուցափեղկերուն մէջ կը տեղադրեն, անմրցելի... գեղեցիկ: — Տպարանապետը՝ Gutenbergի թուղթն են: — Տպարանապետը տաղանդներու եւ հմտութիւններու փորձաքեր են, ասոնց խառնելով է որ մէջ տեղ կ'ըլլայ իրենց իսկական աշարը: — Միտքի մարդոց հմտութիւնն ու տաղանդը իրենց համար ոսկի պէս անհղձ գրաւորութիւններ են, որոնցմով մարդ կընայ պզտիկ կամ մեծ համար: Այնչէ՛ւ, Ձի համարաւած տաղանդ մը՝ չի շահագործուած գրամի կը նմանի Ուստի միտքի մարդոց ամէնէն մեծ բարեբաղն են տպարանապետները, անոց համար որ ա՛նք միտքի կարող են փրկել իրենց միտքի պաշարը անշարժութենէ, եւ շարքերութեան մէջ դնել իրենց այդ թանկագին գրաւորութիւնները: — Մահամբը գրագետը երկու բան կը փնտռէ իր վերջին վայրկեաններուն, հրեշտակ մը՝ հոգին յանձնելու համար, մէկըն ալ... տպարանապետ մը՝ ձեռագիրները յանձնելու համար: — Տպարանապետները անմահութեան գոգը կ'առաջնորդեն տաղանդաւոր մարդոց գործերը ինչպէս հրեշտակները՝ արժանաւոր մարդոց հոգին Մինչեւ հիմայ մեր մէջ հրեշտակի նմանութիւն բերող ոչ մէկ արարած կընայի՞ր երեւակայիլ... բաց ի կեններէն: Որո՞ւ միտքէն կ'անցնէ որ օրին մէկը տպարանապետներու պէս մուրտ կուտար մարդիկն ալ իրը հրեշտակ պիտի արմպեն եղէր բանաստեղծներու եւ գրագետներու պէս ժանեակներու: Եւ հոլանի կոյս լանջքերու շուրջ գեղեցիկ մարդոց առջեւ:

ՍՍՐԳԻՍ Ս. ՍՍՔԱՆՍՆ



1. — Հայկ Կիւսէնեան (ջութակահար): 2. — Ստեփան Բաբելեան (դաշնակահար-երգահան): 3.—ա. Օր-
վերոնիքա Սիմանեան, բ. Ս. Սիմանեան՝ քաւ-ջութակահար, դ. Յարութիւն Սիմանեան՝ երգահան, նուագա-
պէս, ջութակահար-դաշնակահար, դ. Անտոն Սիմանեան՝ ջութակահար՝ բլր եւ եղբայրներ: 4. — Երուանդ
Ելիկիւզէլ (Կիւլեան)՝ baryton: 5. — Ստեփան Ակայեան՝ ténor, արուեստապէս էմէնսիներ:

So, ուե, մի, ֆա, սոր, լա, սի, so, անա ժողովրդ այն նուրբ արուեստին, որուն երաժշտութիւն անունը կու-
սանք եւ որ իր մէջ կը բովանդակէ ախորժիկ կուկուրիկ կուէն մինչեւ Վիոնի, Շոքեթի եւ Մենսջուրնի բարձր
compositionները: Բնութեան մէջ ամէն ինչ իր երաժշտութիւնը ունի: Ինչպէս հովիւն սոյլը եւ ածուխին սայլը, մին
ժիւթի, միւսը ջութակի նմանութիւններով, բայց պէտք է զիջեալ որ ամէն ջութակահար Ալիւ Տադիէն չիջնար:
Երաժիշտները որչափ զգայուն, այնչափ ալ խիղճ եւ կարեկցութիւն կ'ունենան. իրենց սրտին թելերը իրենց գործի-
ներուն թելերուն պէս այնքան բարակ կ'ըլլան որ պզտիկ յոյզ մը, թեթեւ ցաւ մը զիրենց կը փղծկեցնեն յարատու...:
Երանի՛ այն օրհորդին որ երաժիշտի մը զգայուն սրտին վրայ կը սեղմուի: Երաժիշտները չեն կրնար ունենալ բարձր
ուսում եւ գիտութիւն, անոնց մօտ այդ կրկնակ ոյժերը համակ զգացում կտրած են եւ անոնց ամբողջ ոյժը, կարո-
ղութիւնը եւ արժանիքը իրենց միջինիկ սրտին մէջ կեդրոնացած, եւ անա ասոր համար է որ եթէ նոյն իսկ
ետն մը ռոնալտը ըլլայ, pauvre bête!!! կ'ըսեն, մինչ մենք... Խառնախի: Երաժշտութիւնը քաւարառութիւն պէս
ամէն դուռ կը բացայ կ'ըսեն, կ'ըսեն կամ գիտէիմք, բայց ախա՛ս որ մեր Յիմարանցին դռները փոխանակ բա-
նալու՝ կրկին անգամ կոպեց: Հոն ուր խօսք եւ գիտութիւն կը լսեն, երաժշտութիւնն է որ յաղթանակը կը տանի:
Այն որ երաժշտութենէ համ չառնէր, ըսել է՝ սիր չունի, սէր չունի, խիղճ չունի: Կնոջ փառախիմ յաղթելու է՛ն
վճռական եւ վաւերական միջոցը երաժշտութիւնն է: Ջութակին լարերը թրթռացնել զիցիւր, անա կին օձը ոտե-
րուդ տակ պիտի սանձուկի: Ամէն ականջ պէտք է սըն յայտ օճառէն ա՛լ աւելի մաքուր եւ պատշաճ ըլլայ յաղա-
ղելու միջոցի՛ն՝ սրտին, սիրտը խղճին եւ խիղճը անմահութեան տանելու համար: Շօթէն մենք երգահանը իր յուզա-
րկաւորութեան սարսուռն մեղեդի մը յօրինած էր, եւ անով թաղեցին...: Եթէ զիջեամք թէ կրօնական պատկառելի
ժողովը պիտի թոյլատրէ նոյն բանը ընելու դազաղիս առջեւ... adieu Տէր պապա եւ ժամկոչ աղբար. c'est Lilas
qui part!!!

ԼԻԼԱ

«Քօթէր»ին տեղ ինչնէր... միտք չունին կազմել փանքը հայ տունին — «Մէնֆօնի»նէրը Հայտնին: ** Կու-
սանք անունն այն «մօնսօ»ին զոր մարդ զոց ընելուն մէջէն քիչ մը զօ՞ղ ազատի. — «Ձիկայնէն Վալդէն»ը Սա-
ռազատի: ** Ո՞ր երգահաններ սնապարծիկ օրհորդին «ռէրէնձուառ»ին միշտ մասն են. — Կունսն, Վէռսին, Մա-
սընէն: ** Ո՞վ ունի ցունց «սօնամ»ներ՝ որոնց ի լուր կը պարծենանք թէ լսելիքնիս կը թողնեն... — Պէնովէն:
** Որոնք են այն մենք մարդեր որոնց՝ tapeur մը յաճախ կը կեդրէ... քալուածքն ու կերպեր. — Կլիւք, Լիւս, Պախ,
Մէյթրպէր: ** Գտէք անունն անոր որուն պէս ունեցանք արդեօք դաշնակ ածող մը ցարդ. — Մօցարդ:
** Ո՞րն է այն «մօնսօ»ն զոր աղէկ ածելուդ համար կ'ելլես շա՛ս ինասի. — «Բիէնէն»ը Շամինասի: ** Ռա-
կին համար ինչ բան չարժէք նոյն իսկ կազէլ, ճէման ու մանի. — «Ճառնակ»ն է ան Շունմանի: ** Կ'առաջար-
կեն կտորներ՝ որոնց ի լուր դաշնակահար հայուհուն սիրտը կը փրթի. — «Մէյօսի»ները Շուպէնովի: ** Անուն հա-
նած որ երգահանին ըստիսին հայ երաժիշտներ պիտի թողնալ ուզէին. — «Դաւովն»ակէր Պիզէլին: ** Աղ-
ջիկ, ինչ է այդ, ռէ-մի-սօ, ֆա-մի-ռէ, սօլ-լա-սի. — ... Թառխանա՛ չօրպասի: ** Մրցումի համար, եռածայ-
նին վերջ մը որոնք չեն մաղծեր. — Զիլինկիրեան ու Մէհէր: ** Երաժշտական որ ճաղանդնիս՝ հիւանդ ու անոք...
մտաւ դաւաճարան. — Զուհանեան Տիգրան: ** Կը ճանաչեմք «Բիանիս» մը որուն մասններուն ճոճերէն անվերջ...
կը վազէ ոսկին. — Բասէնէվսքին: ** Երաժշտական աշխարհէն, մերիներուն ըով, ով աղամանդն ու արեւակն էր.
— Ռիշաւ Վակնէր: ** Ո՞ր ընդունարանն է այն՝ ուրկէ երգ մը թղխելուն... չեղա՛ք մարիք քա՛ք տե՛ղի. — Կոկորդը
Մասամ Բանթիի...

ԹԷՆՈՂԻՆ

Երաժիշտները փորձ ու լուրջ խոհարարներ են, որոնց պատրաստած կերակուրը հոգին կը սնուցանէ մարդուս:
— Երբեմն «երաժշտութիւն» անունն տակ մեզ կը հրաժեշտեն անանկ անհամ եւ անմարտելի կտորներ որոնցմէ
սնունդ չառնելէ զատ ընդհակառակն ստամոքսին՝ ալ կը խանգարի: Բայց երբ մարդ սա խմբանկարին վրայ ակ-
նարկ մը նետելու ըլլայ, կը համոզուի թէ մեր երաժշտական խոհանոցին մէջ համեղ կերակուրներ պատրաստող
ՎԱՐՊԵՏՆԵՐ ալ չեն պակսիր եղեր: Միայն թէ ի՛նչ աղէկ եղած պիտի ըլլար եթէ այդ խոհանոցին մէջ ծակքար
մին ալ զետեղուած ըլլար ուրկէ կարելի ըլլար վարտալ... տո՛՛կած խորտիկներ: — Ասկէ անկէ մէյմէկ կտոր առ-
նելով իրարու միացնող եւ morceau մը պատրաստող երաժիշտները կը նմանին այն մարդոց՝ որոնք ձեռքերնին խո-
շոր պնակ մը բռնած՝ ճաշարանէ ճաշարան կը պտըտին ու — մենզէն թէ շաքարեղէն — համով ի՛նչ կերակուր որ
գտնեն, մէյմէկ portion առնելով իրար կը խառնեն ու կը ներկայացնեն մեզ զայն իբր նորահաս կերակուր մը՝
զոր չէ թէ միայն չ'են կրնար ուտել, այլ եթէ ուրիշ մին ալ առկէ ճաշելու ըլլայ... գանելանք կ'զգաս:
— Երաժշտութիւնը դեղորեկց մտն կը կազմէ հիմայ: Արդե՛ բժշկութիւնը ընդունած է իր մէջ ջրարուժութիւնը
ինչպէս նաեւ երաժշտարուժութիւնը: — Ինչ աղբեցութիւն որ ունի morphineը մարմնոյն վրայ, նոյնն ունի
երաժշտութիւնը հոգեղն վրայ՝ ցաւի, կոկիծի եւ վիշտերու պարագային, զորս բոլոր կը թօթ վեն... ճաղկելով
վրայէր փոշի վանելու մը պէս: — Երգելը հերքել է կեանքի դառնութիւնները: — Երգելը հերքել է զգացում
ներու դաշտերը: — Երգելը դրկել է այն պերտոյած հոգին՝ զոր կը կոչենք անուրջ: — Երգելը՝ սիրելու կը նման
նի. աղբիկ մը ո՛րքան գեղեցիկ ըլլայ՝ այնքան շա՛տ զայն... շուրթերուդ մերձեցնել կ'ուզես. երգ մը ո՛րքան
աղւուրդ ըլլայ, այնքան շա՛տ... բերան կ'առնես: — Ձայնով տգեղ մարդու մը բերնին մէջ է՛ն աղւուր երգը՝
դէմքով տգեղ մարդու մը բազուկներուն մէջ գեղեցիկ կնկան մը տպաւորութիւնը կը թողու վրայ: Հիացումը
իսկոյն կը փոխուի... մահացումի:

ՍԱՐԳԻՍ Ս. ՍԱՐԳՍԵԱՆ



1. — Յարութիւն Ալիսանեան (հակառակորդ)։ 2. — Մարտիրոս Մնակեան (դերասանապետ)։ 3. — Ռուբէն Պիննէմէնեան (jeune premier), դերասան եւ ժեսիները։ 4. — Տիկնայք Զօպէլ Հէփմեան։ 5. — Ազնիւ Ա. Մնակեան։ 6. — Աղաւնի Ռ. Պիննէմէնեան՝ դերասանուհիներ։ 7. — Երուանդ Թօլայեան (comique)։ 8. — Տիկին Քնար դերասանուհի։



1. — Վահան Փափազեան (Լիլա), Տնօրէն-նախագահայե «Հանրային» զանեօսաբեր, ին: 2. — Թէոդիկ հեղինակ «Ամէնուն Տարեցոյց»ներուն: 3. — Սարգիս Ս. Ստեփան, Հեղինակ, «Գաղափարի Քանդակներ» անուն Լեկին, ՚ի մօտոյ հրատարակելի: 4. — Թ. Զաւենան՝ պէս Իսկիւսարի «Չամիւրնա» լոսանկարչոսան, որուն կը պարսինք մեր ալպովին կենդանագլորներուն մեծ մասը:

ՆՐԲԱՐՈՒԵՍ ՅՈՒՑԱՀԱՆԴԵՍ ՄԸ

ԱՆՄՐՑԵԼԻՆ “SINGER”

Թեեւ ամբողջ մեկ եջի մեջ կարելի չպիտի ըլլայ խտացնել այն անագին սայօններն՝ ուր ի ցոյց դրուած են հրաւայի ու մոգական մեքենաներուն արդիւնները, ինչպէս ե՛ն հարսար վրձիներ չպիտի կրնային գծել այն նուրբ եւ երփներանգ կերտումներն զորս յառաջ բերած է հարպիկ ու մինիմիկ ասեղը :

ՍիՆԿԵՆՏԻ Տնօրէնութեան Բերայի շէնքը կարծէ այցելել այս օրերուն՝ ուր ցուցադրուած են համաճումն մեքենային ե՛ն վերջին կատարելագործութիւններն, ինչպէս՝ բանուածներ, մեքսախեա հիւսկներ, պոսկներ եւ այն ամէն բաները՝ զորս մարդկային ձեռքը որչափ ալ հարսար, չի կրնար հաւասարիլ : Երեւակայեցե՛ք ամբողջ սրահ մը որ միւզեօմ մըն է, կատարեալ քապոնետու պ սրահըր սալու չափ գունագեղ եւ նուրբ, որոնց առջեւ մարդ կապոն կը մնայ եւ չի կրնար ըմբռնել քէ այդ մեքենային մեջ բաճող փոքրիկ ասեղ մը ինչպէս ի գըլուխ կը հանէ այդ հրաւայիքները, ինչպէ՛ս . . . :

Գացե՛ք, այցելեցե՛ք, մօտէն համոզուելու համար քէ՝ ՍիՆԿԵՆՏԻ մեքենան ի՛նչ ժամանակուան մեջ ի՛նչ զգալի յառաջդիմութիւններ եւ ի՛նչ սխալելի նորութիւններ յղացած է : Յուցահանդեսին շուրջ կը կազմէ երկու գեղեցիկ պասկներն Վ. Հիւկօի եւ Պիզմարի, որոնք այնքան աղուոր բանուած են որ, կարծես պիտի խօսին, լեզու պիտի ելլան բովելու այդ հրաւայործ մեքենան : Անոնց մօտ կերեւան մոգայի/ի նմանութեամբ բանուածները, բոլորն ալ նուրբ ու բնականին յար եւ նման, անգին nature morteները դրուած կան, առանց բնականէն պզտիկ շեղում մը կրելու, փայլուն մեքենա քէլերով բանուած, որոնք իւղաներկէն եւ վրձիներէն տարբեր անուութիւն մը, անոնցմէ գերազանց փայլ մը կը կրեն շնորհիւ վառ մեքսային, որով կերտուած են ամբողջովին :


Աստղագործութեան մեջ չէ մնացած ո՛ր եւ է գաղտնիք մը զոր չի լուծէ եւ չի կրնայ տարտել ՍիՆԿԵՆՏԻ ասեղը :

Այս բոլոր զարմանազան բանուածներուն մօտ, սայօնին մեկ ուրիշ compartimentին մեջ կերելին ներմակեղեններու վրայ աչառու պոսկներ, օժիտի յատուկ, անթորչաւ շիք եւ նրբակերտ սկզբնասառեր. մահաւաղի ծածկոցներու հիւսուածներ, բարձի երեսներ, վերջապէս առանց մանրամասնութեան մտնելու՝ ըսեմ կանացի բոլոր պիտոյներու նոյն ամբողջութիւն մը, որուն ի տես մարդ կապոն կը մնայ : Առաւելութիւն մը որ կը նշմարուի ցուցահանդեսին մեջ, այն է կանանց յատուկ ներմակեղեններու վրայ բանուածներու պէսպիսութիւնները, որոնք ամէն ազգերու գործածածին դրօժը կը կրեն, եւ որ կարծէ իբր հետաքրքրութիւն տեսնել ու վայելել :

Զարմանալի չէ՞ գտնել, երբ ըսեմք քէ այս բոլոր հրաւայի բանուածները մեքենան է որ կրնէ, ան է որ պարզ ձեռքերու օժանդակութեամբ վարպետներն յառաջ կը բերէ մասոնք այնպէս որ ո՛ր եւ է անհաս, կրնայ ՍիՆԿԵՆՏԻ մեքենաներուն միջոցաւ ձեռք բերել այն բոլոր գնայելի պէսպիսութիւնները՝ զորս ի ցոյց դրուած են եւ ամենուն ուշն ու ուրուօր կը հրաւիրեն : Բաւական է ունենալ հաս մը այդ մոգական մեքենաներէն եւ անա ունենալ ըսել է ցուցահանդեսին մեջ գտնուած բոլոր նկարագեղ առարկայները :

Դիտեցե՛ք ուրեմն, ՍիՆԿԵՆՏԻ Տնօրէնութեան Բերայի շէնքը, ուր մօտէն տեսնելով պիտի համոզուիք մեր ըսածներուն, որոնք կենդանի նմանութիւններ են ամենուն աչին առջեւ ի ցոյց դրուած, մուտքը ձրի, առաւելութիւն մը՝ ուրկէ կրնա՛ք օգտուիլ :

ՍիՆԿԵՆՏԻ՛ այս ծրուցահանդեսը որ կազմակերպուած է ժամանակուան մը համար, կրնայ օգտակար ըլլալ ամէն անոնց՝ որոնք իրական եւ գործածելի մեքենայ մը ունենալ կը փափաքին, անա ինչո՛ւ շեքմապէս կը յանձնարարենք ՍիՆԿԵՆՏԻ հրաւայի մեքենան : ԽՄԲ.



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Թ. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ
Կ. Պոլիս, Պապը-Ալի ճառասկսի քիւ 52